# ՆՈՐ ԿԵԱՆՔ

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

**La Nouvelle Revue** (15/6. 99) **Անծանօթ մեծ բանաստեղծ մը.** — Սա ինքն է Կուինտոս Զմիւռնացի, որ Հոմերի **Իլիականը** շարունակից. և իրեն այս երկը գտաւ ԺԵ դարուն մէջ Բեսսարիոն ծիրանաւորն: Կը կարծուի՝ թէ նա հռոմէական կայսրութեան ամենէն աւելի շքեղ ժամանակը ապրած է. — և իւր այդ քերթութիւնը կրնանք դնել յունական հանճարոյ գեղեցկագոյն արտադրութեանց քով: Կան բաւական թուով թարգմանուած կտորներ՝ որք կը հաստատեն այս ենթադրութիւնը:

**Questions diplomatiques et coloniales** (15/6. 99) **Իտալական գաղթականութիւն.** — Իտալական վիճակագիրք կրկին, այսինքն կայուն և ժամանակաւոր գաղթականութիւն կը դնեն. — ժամանակաւորն այն է որով ոմանք կը գաղթեն մերձաւոր աշխարհներ և կանոնաւոր կերպով կը դառնան իրենց երկիրը, և այս վերջինս Իտալիոյ մէջ միշտ կարևոր համարուած է. — յամին 1876 89,015 հոգիք առ ժամս ձգեր էին թերակղզին. 1886ին՝ 85,355 հոգիք, իսկ 1890ին՝ 112,511 և յամին 1896ին, 124,139: — Ընդհակառակն, կայունն միշտ աճեցուն եղած է, որոյ գլխաւոր միջոցներն են հետեւեալք. 1876ին՝ 19,756. 1880ին՝ 37,934. 1885ին՝ 77,029. 1890ին՝ 104,733. 1891ին՝ 175,520. 1895ին՝ 169,513. յամին 1897՝ 165,429: Այս քսան տարիներու մէջ Ճենովայի նաւահանգիստն միայն ընդունեց է 1,500,000 ի հարաւային Ամերիկա գացող հոգիներ, և 500,000 ալ անկէ դարձող: Իսկ յԱմերիկա գաղթող միլիոնն ալ բաժնուած է այսպէս, 400,000 Արճենդինեայի Հասարակապետութեան, 500,000 ի Պրէզիլ, 100,000 ուրիշ հարաւային հասարակապետութեանց: Իսկ արուեստի տեսակէտով, կը համարուի թէ 70 առ 100 ըլլան երկրագործք և գիւղացիք. 16 առ 100 արհեստաւորք, 5 առ 100 փերեզակներ, ճարտարագործ աղիւսագէտք:

**Աւստրալիոյ քաղաքական կացութիւնը.** — Տարածութիւնն է 3,077,377 միլիոն անգղիական քառակուսի (համեմատական Եւրոպային). — ծովեր, գրեթէ 22.000 հազարամեղր ընդերկրեայ, որ ցարդ 13 միլիար ֆրանգաց արդիւնք առաջ բերած է, ունի ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, ածուխ, և այլն. — եօթն գաղթականութիւնք են. Կալլէս հարաւային, Քուինսլա, Վիկտորիա, Միջին Աւստրալիա, Արևմտեան Աւստրալիա, Թասմանիա, Նոր Զելանտ (Բրիտանական Նոր Կուինէի գաղթականութիւնը հազիւ սկսած է). — Բանակ. 25,510 հոգիք, որոց 1,484 կայուն են. — օժանդակ տորմիղ. 5 արագընթաց, 2 ընդհովեայք. — Աւստրալիա՝ Բրիտանական նաւատորմղով մէկ տեղ՝ պատերազմի ատեն կրնայ ծածկել իւր ծովեզերքը 38,400 նաւերով, 300 թնդանօթներով և նաւահար գործեօք:

**Preussische yahrbücher** (1/6 99): Կէօթէին բերանը ընտանի ճառ մը կը դնէ վերնագրով. **Իմ քաղաքական դաւանութիւնս.** և ասոր զանազան մասերն քաղուած են նոյն բանաստեղծին թղթակցութիւններէն, և այլն. յորում կը նշանակէ ալ անոնց էջերը: Կէօթէ՝ քաղաքական կարևոր խնդրոց մէջ կը պարզէ հոն իւր տեսութիւնները՝ իրեն իսկ խօսքերովն, որոց մի քանին դնենք հոս. — **Հայրենասիրութիւն.** «Զարգացման աստիճան մը կայ՝ յորում կը ջնջուի ատելութեան հայրենասիրութիւնը, յորում ազգութեան շրջանակէն վեր կը սլանանք, և հոն կը զգանք մերձաւոր ազգի մը, իբրև իրեն ազգին, երջանկութիւնը կամ թշուառութիւնը»: — **Պատերազմ.** «Հիւանդութիւն մը յորում կենսատիթ և առողջարար նիւթն կը ծառայէ օտար սարր մը սնուցանելու և է բնութեան հակառակ»: — **Յեղափոխութիւն.** «Կ'ատեմ ո՛ր և է բուռն յեղափոխութիւն. վասն զի անոր մէջ կորուստն կը հաւասարի շահուն»: «Անկարելի կ'ըլլան յեղափոխութիւնք՝ եթէ վարչութիւնք արդար ըլլան և արթուն, և կարեւոր վերանորոգութիւններով անոնց առաջը առնուն»: — **Տպագրութեան ազատութիւն եւ ընդդիմութիւն.** «Անսանձ ընդդիմութիւնն տգեղ է, իսկ սանձն՝ հոգիւոր կ'ընէ այդ ընդդիմութիւնը, և այդ շատ մեծ օգուտ ունի»: — **Գաղղիացիք.** «Գաղղիական ազգն ծայրայեղ է, և երբեք չափ չի ճանչնար»:

**Հայնրիխ Հայնէ իւր հարիւրամեակին.** — «Գերմանիոյ մատենագրաց ամենէն աւելի կարդացուածն և ամենէն աւելի լլկուածն՝» այն հասարակութեան աչքէն ելաւ՝ զոր երբեմն կը շփացընէր: Իրեն երկասիրութեանց մէջ շատ սակաւք դեռ եւս պահած են իրենց առաջին ընդունելութիւնը. Պայրընի համեմատութեամբ, Հայնէ փոքր կ'երևի: Այլ եւս չէ նա թարգման անոնց քաղաքական ձգտմանց: Իւր գաղափարականն հինցած է: Իւր կեանքն և բնաւորութիւնն կը վիրաւորեն շատերը, և անոնց ազդած հակակրութիւնն այն աստիճանի կը հասնի՝ որ բանաստեղծին հանճարն անգամ մոռնալ կու տայ: Այսու հանդերձ Հայնէ մեծ քնարերգակ բանաստեղծ է, մին անոնցմէ՝ որոց բանաստեղծութիւնքն շատ ընդունելի եղած են: Եւ Կէօթէի բանաստեղծութեանց պէս՝ ժամանակակից մեծ երաժշտաց ճարտարութեամբ նոր կեանք զգեցած են: Հայնէ կը մեղադրուի՝ իբրև թէ բանաստեղծական անկեղծութիւն չունի. բայց յանիրաւի: Իսկ զգացման և հեգնութեան խառնման մասին՝ որոց համար զինքը կը մեղադրեն ոմանք, միթէ արդի բանաստեղծութեան էական բնադրոշմներէն մին չէ՞ այդ՝ Լորտ Պայրընի և վիպասանական ժամանակէն ի վեր: Արդ, Հայնէի գործոց մէջ շատ մը զանազան գրական ազդեցութիւններ կան, բայց ունի եւս նա իւր յատուկ սեփականութիւնը: Ունի նա հաւասարապէս ժողովրդական պարզութեան հետ՝ արդի քնարերգակ արուեստին նուրբ և զօրաւոր արտայայտութիւնը: Իսկ իրեն Nordseebilderին մէջ կը հասնի մինչև ի վսեմն ալ. — և Կէօթէի հարազատ ժառանգն է ժողովրդական պարերգին մէջ: Բովանդակ իւր հանճարն կը տեսնուի իրեն վերջին տողերուն մէջ, զորս յօրինեց հիւանդութեան մահճաց մէջ և որք յաճախ սրտայոյզ են:

digitised by A.R.A.R.@